



ԵԶՆԻԿ ԱՔԵՂԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՄՈՎՍԵՍ ԵՐԶՆԿԱՑՈՒ «ՊԱՏԱՍԽԱՆԻՔ ԹՂԹՈՅՆ
ՏՐԱՊԻԶՈՆԻ ԱՌ ՀԱՏՈՒԱԾԵԱԼՆ ԳՐԻԳՈՐ ԵՐԷՑ»
ԴԱՎԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԹՈՒՂԹԸ

Մովսես Երզնկացու* դավանաբանական գրքերի կարևոր գործը «Պատասխանիք թղթային Տրապիզոնի» ընդհանուր խորագիրը կրող գրությունն է:

Սույն թղթի գրության նախադրյալների, գրողապատճառների և արդյունքների մասին ջատ քիչ քան է հայտնի մեզ:

Վերնագրից երևում է միայն, որ Մովսես Երզնկացին սույն գրությունը գրել է Տրապիզոնցի հունադավան Գրիգոր քահանայի՝ հայ եկեղեցու մասին արված ամբաստանագիր-թղթին ի պատասխան:

Վերնագրի «հատուածեալն» մակդիրը և թղթի մեջ տեղ գտած «որպէս նոքա սանն», «գոր և դոքա շաղակրատեն», «Այլ դու զգոյշ եր Գրիգորիէ ... զի մի գայթակղեցիս» և այլն արտահայտություններ հուշում են, որ Գրիգոր քահանան հունադավան հայ է:

Նրա գրած ամբաստանագիր-նամակը մեզ ի հասել, սակայն այդ թղթի բովանդակության մասին մտավոր գաղափար կարող ենք կազմել Մովսես Երզնկացու «Պատասխանիք թղթային Տրապիզոնի» գրության մեջ

տեղ գտած մի շարք արտահայտություններից, որոնց մեկը կանոնադառնակ քիչ հետո:

Թե երբ է Մովսես Երզնկացին գրել իր պատասխան թուղթը, ճշգրիտ ոչինչ չենք կարող ասել, բայց ունենք մտավոր տվյալներ, այսպես.

Երզնկացու սույն թղթի ամենահին ընդօրինակությունը գտնվում է Երևանի ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի № 2174 ձեռագրում, էջ 228ա—235բ:

Սույն ձեռագրում թուղթն ունի մյուս բոլոր ընդօրինակություններից տարբեր վերնագիր.

«Ի Մովսէս վարդապետէ Բան պատասխանատուութեան վասն ողղափառ հաւատոյ ընդդէմ երկաթնակ»:

Սակայն սկիզբը և բովանդակությունը նույնն է.

«Բնաւից բարեաց պարգևատուն զճմարտութիւն միշտ ատուարանէ սիրելեաց իւրոց... (վերջը) Իսկ վասն շարաթուն Ջատկին գոր յիշեալ ես, յերկբայս գոմ թէ զինչ...»:

Այստեղից էջերը ընկել են: Գրվածքը ցեցակեր է, պակասավոր, անընթեռնելի, վերջում՝ թերի մի զգալի մասով:

Սակայն մեզ համար ամենակարևորը № 2174 ձեռագրի գրության թվականն է՝ 1309 թ.:

Սա նշանակում է, որ Երզնկացին իր վերոհիշյալ թուղթը գրել է 1309 թվականից առաջ:

Մեզ հասած ամբողջական ամենահին օրինակը համարվում է Երուսաղեմի № 773

* Մովսես Երզնկացու կյանքի, գործունեության և հատկապես վաստակի մասին տե՛ս մեր նախկին րկու հոդվածները.

ա.—Մովսես Երզնկացու «Հատարումն համառոտ Ռկնութեան սրբոյ պատարագին, գոր յատաշագոյն արարեալ է սրբոց յուստոյ հարցն» աշխատությունը, էջմիածին, 1973, №№ Թ, 14—20, ԺԱ, 43—48:

բ.—Մովսես Երզնկացու «Ընդդիմադրութիւն սակարոյն խառնման ի սուրբ խորհրդոյն ի թուին հայոց ԾԺԸ» դավանաբանական թուղթը, «Էջմիածին», 1974, №№ Թ, 33—42, Ժ, 49—64:

ձեռագրի ընդօրինակությունը, էջ 140ա—148բ, 1359 թվականին:

Մենք մեր ուսումնասիրության համար թղթի բնագիրը կազմել ենք ըստ Երևանի և Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի տասնյակ ձեռագրերից ամենահին՝ № 2678-ի, էջ 108բ—115ա, ընդօրինակված 1426—1476 թթ.:

Գրեթե բոլոր ձեռագրերում թուղթն ունի փխևույն վերնագիրը՝ «Մովսէսի հայոց վարդապետի գրեալ պատասխանիք թղթոյն Տրապիզոնի առ հատուածեալն Գրիգոր երէց», կամ հապավված ձևով՝ «Պատասխանիք թղթոյն Տրապիզոնի»:

Այստեղ պետք է հիշել միայն, որ Երուսաղեմի № 652 ձեռագրում, էջ 60ա—72բ, սույն թուղթը սխալմամբ վերագրվում է Ներսէս Լամբրոնացուն: Այս սխալմունքը ժամանակին անկատելի է իր ձեռագրացուցակի մեջ արձանագրել է Տ. Սարգսյանը:

«Մովսէսի Եզնկացոյ թղ. գրեալ ի Տրապիզոն առ Գրիգոր երէց հոռոմացեալ: Իսկ առտ սխալմամբ գրի ի վերնագրիս»

Ներսէսի Լամբրոնացոյ ի խնդրոյ ումեմն Գրիգորի բանասիրի զայնուսիկ եւեթ յիշատակէ» (Սարգսյան, Ցուցակ ձեռագրաց Երուսաղեմի, էջ 380):

* * *

Ինչպես արդեն հիշեցինք, Գրիգոր Տրապիզոնցու նամակը մեզ չի հասել: Սակայն Մովսես Երզնկացու հակաճառական գրությունից հստակորեն կարելի է եզրակացնել, որ Տրապիզոնցին իր գրության նպատակ է դրել արձանագրել հայոց եկեղեցու «թերությունները», ըստ հունադավան մտածողության, որոնք հետևյալներն են.

ա.—Պետք է հաղորդության և բաժակի մեջ ջուր խառնել.

բ.—Քրիստոսի և Օնունդը պետք է տոնել դեկտեմբերի 25-ին և ոչ թե հունվարի 6-ին:

գ.—Ս. Հովհաննէս Մկրտչի ծնունդը պետք է տոնել հունիսի 24-ին և ոչ թե հուլիսի 11-ին.

դ.—Պետք է դավանել «երկու բնություն ի Քրիստոս».

ե.—«Լուսույ» յուրը (մեռուն) պետք է միայն պտղի ձեթ լինի և ոչ այլ նյութից:

Բացի այս բացահայտ մեղադրանքներից, Գրիգոր Տրապիզոնցու ամբաստանագրի մեջ, մեզ համար անորոշ դիրքավորումով խուսվել է նաև հետևյալ նյութերի մասին.

զ.—Ավետյաց տոնի մասին.

է.—Օնունդան Ավետյաց տոնի մասին.

ը.—Պատկերահարգության մասին.

թ.—Վասն շաքարոն Զատկին:

Մովսես Երզնկացիս քաջատեղյակ լինելով դավանաբանական և ծիսական խնդիրների բոլոր նրբություններին, խորը վերլուծության է եւթարկում վերոհիշյալ հարցերը և ցույց տալիս հայ եկեղեցու ընդունած սկզբունքների ճշմարտացիությունը:

Վերջում Երզնկացին խոսում է նաև այն թերությունների մասին, որոնք մուտք են գործել հայ քրիստոնյաների վարք ու բարքի մեջ: Իրանք են.

ա.—Արտաքոյ եկեղեցույ զպաշտօնն կատարել.

բ.—Զեկեղեցի և զառաջնորդութիւն ժառանգութիւն ունել.

գ.—Զեկեղեցի վաճառել.

դ.—Զեկեղեցի Քրիստոսի դատեր բաժին տալ (օժիտ).

ե.—Զեռնադրութիւն արծաթով առնել.

զ.—Նորակնքի և հիսանդի և մեռելի ձեթ ոչ օրհնել.

է.—Ի տօնախմբութիւն հեղձ գտանել օրհնաց և առաջնորդաց անհնազանդ լինել.

ը.—Յագագապոծութիւն խոտորել.

թ.—Յերդումն և յիշոց յաճախել, և այլն: Երզնկացին իր նամակը վերջացնում է՝ խրատելով Գրիգոր քահանային զգույշ լինելու և հունադավանության ծոցը չսայթաքելու:

Հայ դավանաբանական գրականության 19 արժեքավոր գործ կարելի է համարել Երզնկացու սույն գրությունը՝ իր շոշափած թեմաներով և դրանց ի.որ.ը վերլուծությամբ:

Մովսես վրդ. Երզնկացու «Պատասխանիք թղթոյն Տրապիզոնի առ հատուածեալն Գրիգոր երէց» դավանաբանական թուղթը կհրապարակվի «Էջմիածին» ամսագրի հաջորդ համարներից մեկում:

